ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով վերոնշյալ ՀՀ Սյունիքի մարզի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 01/16/08465-2023 գրությունը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 5403222 /հինգ միլիոն չորս հարյուր երեք հազար երկու հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ տեղափոխել 06.3.1 ծրագիր 5113 հոդված՝ որպես Սառնակունք բնակավայրի կոյուղագծերի և սեպտիկ հորի կառուցման աշխատանքների, նախագծի, փորձաքննության, տեխնիկական և հեղինակային հսկողության պայմանագրերում փոփոխություն կատարելու համար:

Հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 24-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժին պետի Երվանդ Եղիազարյանի զեկուցագիրը՝ ավագանու որոշման նախագծով առաջարկվում է համայնքի բյուջեի եկամտային մասի տեղական տուրքերի մասով, համայնքի վարչական տարածքի, սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար պլանավորված 4200000(չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամը նվազեցնել 800000(ութ հարյուր հազար) ՀՀ դրամով և սահմանել 3400000(երեք միլիոն չորս հարյուր) ՀՀ դրամ և եկամտային մասի ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ հոդվածում ավելացնել վերոնշյալ գումարը:

Ավագանու որոշման նախագծով առաջարկվում հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

Նախկին Գորայք համայնքի Սառնակունք բնակավայրի կոյուղագծերի և սեպտիկ հորի կառուցման աշխատանքների համար նախատեսվում է 06.3.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 69864900 (վաթսունինը միլիոն ութ հարյուր վաթսունչորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ և որն տրամադվելու է պետության կողմից և պլանավորվելու է ֆոնդային բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում:

Նախկին Գորայք համայնքի Սպանդարյան բնակավայրի կենցաղի տան տանիք 24.96 դրվածքային հզորության արևային կայանի տեղադրման, կենցաղի տան և վարչական շենքի էլեկտրական վահանակներով ջեռուցման աշխատանքների համար նախատեսվում է 06.1.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 6448900 (վեց միլիոն չորս հարյուր քառասունութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ և որն տրամադվելու է պետության կողմից և պլանավորվելու է ֆոնդային բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում:

Նախկին Գորայք համայնքի Ծղուկ բնակավայրի 1-ին փողոց, շենք 10 վարչական ղեկավարի նստավայրի շենքի վերանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության համար նախատեսվում է 01.1.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 130700 (մեկ հարյուր երեսուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ և որն տրամադվելու է պետության կողմից և պլանավորվելու է ֆոնդային բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

11.12.2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն և ծախսերը կավելանա 75644500 (յոթանասունհինգ միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

11.12.2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Սյունիքի մարզ, 3301, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, Հեռ.՝ +374 60 517822, +374 28544291, Էլ.փոստ՝ syunik@mta.gov.am

« » 2023թ., №

Սիսիան համայնքի ղեկավար Ա.Հակոբջանյանին

Հարգելի պարոն Հակոբջանյան

Ձեզ ենք ներկայացնում՝ Գորայքի համայնքապետարանին հասցեագրված ՀՀ Սյունիքի մարզպետի 25 Փետրվար 2022 թվականի 01 /16/01303-2022 և 15 Հուլիս 2021 թվականի 01 /16/04547-2021 գրությունները՝ ի գիտություն:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ վերոնշյալ գրություններով Գորայքի համայնքապետարան է ներկայացվել սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 16-ին կայացած նիստի վերաբերյալ տեղեկատվությունը, որում նշված է, որ «Սառնակունք բնակավայրի կոյուղագծերի և սեպտիկ հորի կառուցում» սուբվենցիոն ծրագրի պետական մասնաբաժինը կազմում է 65%:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նշված սուբվենցիոն ծարագրի շրջանակում 20 մայիսի 2022թ. ՍՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-22/10/1 կնքված պայմանագրում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել փոփոխություններ՝ ճշտելով ծրագրի իրականացման համար վճարվելիք գումարների մասնաբաժինները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Հարգանքով՝ **Ռ.Ղուկասյան**

Հաստատված է էլեկտրոնային

ստորագրությամբ

Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին

Կատարող՝ Հ.Կարախանյան

Հեռ.՝ աշխ. (0285) 44292 բջջ. (077) 007796

Էլ-հասցե՝ syunik.tsragrer@mta.gov.am

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290